

Հայերը լատին եկեղեցիի դիրկը պիտի դարձնէ քիչ ժամանակէն: Ասոր մէջ չյաջողեցաւ, բայց դժբախտաբար հայերէն լեզուն բոլորովին վտարելով արքունիքէն, լատիններէ՛նը յարգ ու պատիւ ստացաւ եւ Հայոց պաշտօնական լեզուն դարձաւ (1): Այս պարագաներուն մէջ ընական էր, թէ ազգայնական կուսակցութիւնը բոլորովին պիտի լարուէր Գուխտոնի գէմ: Եւ իրօք՝ օր մըն ալ ազգայնականներու համբերութիւնն հատնելով, Ադանայի մէջ յարձակեցան թագաւորին վրայ, եւ սպանեցին թէ՛ Գուխտոնը, թէ՛ իր եղբայրներէն Պեմունզը, որ անոր օգնութեան կը զիմէր, եւ թէ՛ բոլոր հեռուորդները (1344 յոյ. 17):

Այսպէսով վերջ գաան, գէթ ժամանակի մը համար, մեր ազգային ներքին խռովութիւնները:

Գուխտոնի սպանումէն ետքը Հայերը միանալով՝ նոյն տարին իսկ թագաւոր ընտրեցին բնիկ հայ մը, Նղրեան ցեղէ Պաղտին մարաջախաի որդին, որ Կոստանդին Գ անունն ստացաւ:

Նոր թագաւորն հայ ժողովրդին սիրցնելով ինքզինքը, շատ խոհեմութեամբ եւ երկար ժամանակ կասաւորեց երկիրը, — թէեւ ժամանակակից պատմագիրը Դարդել՝ մէկ կողմէ կրօնական ատելութենէ մղուած եւ միւս կողմէ Լուսինեաններու հաճելի ըլլալու համար՝ գէշ գոյներով կը նկարագրէ Կոստանդինի թագաւորութիւնը, « բռնակալ » եւ ուրիշ անուններ տալով անոր (2):

չկայ, քե այս երկու անուններու միջեւ շփոթութիւն մը կայ. վասն զի Յովհաննէս կամ Ջուան նոյն 1342 թուին սոսկ քաղապան էր, մինչեւ իր եղբոր՝ Գուխտոնի Կ. Պոլսէն գալը. ուրեմն « Կոստանդին » անունն ստացողը՝ միայն Գուխտոն՝ կրնար ըլլալ, ո՛չ քե Յովհաննէս: Բայց քե ինչո՞ւ համար « Կի » անունով հայ դրամներ գոյութիւն ունին, պարզ է հետեւցնել վերի ենթադրութենէս:

(1) V. Langlois, *Documents pour servir à l'Histoire des Lusignans*. « Revue Archéologique », ին մեջ. Պարիս, 1859, հս. ԺԶ, էր. 144:

(2) Կոստանդին Գ եթէ իրօք « բռնակալ » մեկն էր, եւ կամ ազգին կամքին հակառակ ընթացք մը ունեցած ըլլար, անո՛ր ալ կեանքին կրնային վերջ տալ իշխանները: Ընդհակառակը՝ Կոստանդինի տասնինը տարի (1344-1363) անընդհատ քաղաւորելն ապացոյց է, որ նա սիրելի եղած էր ամենուն, բացի նախանձոս զահաժառանգ Լուսինեաններէ եւ Դարդելի նման լախնամոլ կուսակցութենէ: